

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

24-ը հունվարի 2019թ. ժամը 16⁰⁰

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոպտոր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուսոյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսագերծման բաժնի պետ, ԲՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Բաբաջանյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՎԱ մաքսագերծման բաժնի պետի տեղակալ, ԲՀԾ 2-րդ դասի խորհրդական Ե. Վարդանյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ԲՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 20 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը չի գերազանցում «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի /15 600 000 ՀՀ դրամ/ մեկ տոկոսը և Օրենքով սահմանված շեմը:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին «Արատտա Ռիելթի» ՍՊԸ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

-Հրավերով նախատեսված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման մասով՝ ՀՀ ՊՆԿ ՏՏ վարչության կողմից 10.01.2019թ. ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Արատտա Ռիելթի» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, որը կազմում է 13 677 901 ՀՀ դրամ՝ պակաս է սույն ընթացակարգի շրջանակում «Արատտա Ռիելթի» ՍՊԸ կողմից ներկայացրած գնային առաջարկից /15 600 000 ՀՀ դրամ/, ինչը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի մաս 1-ի 2.5 կետի 3-րդ ենթակետի պահանջներին:

-«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշի մասով սահմանված են՝ գրասենյակը պետք է ունենա առնվազն 4 աշխատող, որոնցից առնվազն մեկն ունենա գույքի գնահատում իրականացնելու համապատասխան որակավորման վկայական, մասնակիցը պետք է ներկայացնի կազմակերպության առնվազն 1/մեկ/ աշխատակցի գույքի գնահատման որակավորման վկայական, ինչպես նաև առնվազն 4 աշխատակցի՝ շուկայական գների և/կամ ապրանքների շուկաների ուսումնասիրման, շարժական և/կամ անշարժ գույքի գնահատման, ինչպես նաև նշված ոլորտներում խորհրդատվական ծառայությունների մատուցման առնվազն 1/մեկ/ տարվա աշխատանքային փորձ, այն ինչ Ձեր կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ ներկայացված տվյալներին համաձայն /հավելված 5.1/ աշխատակազմի աշխատանքային փորձը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող առնվազն 1/մեկ/ տարվա աշխատանքային փորձին:

-«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացրել եք 09 հոկտեմբերի 2017թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ հետ կքված նախկինում կատարված պայմանագիր և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, որի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային

արտահայտությամբ կազմում է 5 053 909,8 ՀՀ դրամ, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացրել էք պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ տեղեկանք, համաձայն որի «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ միջև 09.10.2017թ.-ին կքվել է Ծառայությունների վճարովի մատուցման թիվ A-752/17 պայմանագիրը, որի շրջանակներում «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ-ն որակով, պատշաճ և ժամանակին մատուցել է գնահատման ծառայություններ և մատուցված ծառայությունների արժեքը կազմել է 8 714 974 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում տվյալ պայմանագրի հաշիվ ապրանքագրերով ներկայացված գումարին /5 053 909,8 ՀՀ դրամ/, ինչպես նաև տեղեկանքում բացակայում է ելքի ամսաթիվը: 09.10.2017թ. կքված թիվ A-752/17 պայմանագրի հաշիվ ապրանքագրերը մի մասը /համար 8623611407, համար 0693912576, համար 3354893400, համար 5457476243 և համար 9875852281/ հաստատված չեն Ծառայությունը ընդունող անձի կողմից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ նիստը շարունակել մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

«Արատտա Ռիեյթի» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ՝ <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությանը, որի մասով գնահատող հանձնաժողովին ներկայացրել է հետևյալը.

Ի պատասխան ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից 10.01.2019թ.վականին ներկայացված տեղեկատվության համաձայն որի՝ «Արատտա Ռիեյթի» ՍՊ ընկերության (այսուհետև Ընկերություն) կողմից հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 13 677 901 ՀՀ դրամ, հայտնում ենք, որ նշված տեղեկատվությունը թերի է, քանզի ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից չի հաշվարկվել 2018թ. 4 եռամսյակում ընկերության մոտ առկա համախառն եկամուտը, որի արդյունքում վերջինիս համախառն եկամտի հանրագումարը կազմել է ավելի պակաս քան ընկերության կողմից սույն մրցույթի շրջանակներում ներկայացված գնային առաջարկը: Ելնելով նշված իրավիճակի կարգավորման անհրաժեշտությունից՝ Ընկերությունը դիմել է ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչություն՝ նշված ճշգրտումներ կատարելու և նոր տեղեկատվությունը Ձեզ և Ընկերությանը տրամադրելու նպատակով, որպիսի պայմաններում կհաստատվի այն հանգամանքը, որ մինչև սույն մրցույթի շրջանակներում հայտ ներկայացնելը Ընկերության մոտ առկա համախառն եկամտի հանրագումարը համապատասխանում Ընկերության ներկայացրած գնային առաջարկին: Է ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչությանը 22.01.2019 թվականին ներկայացված դիմումին դեռ պատասխան չի ստացվել:

«Արատտա Ռիեյթի» ՍՊԸ կողմից 22.01.2019թ. գրությամբ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 63-րդ կետի 1-ի եթակետի «ա» պարբերությանը, ինչպես նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի մաս 1-ի 2,5 կետի 3-րդ ենթակետին՝ մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Այսպիսով «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ կողմից ներկայացրած գնային առաջարկը /15 600 000 ՀՀ դրամ/, պակաս է իր կողմից հայտը ներկայացնելու տարվան /2018թ./ նախորդող երեք հաշվետու տարիների /2015թ., 2016թ. 2017թ./ համախառն եկամտի հանրագումարից, /13 677 901 ՀՀ դրամ/, ինչն էլ հիմք ընդունելով հանձնաժողովը որոշեց մերժել «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ-ի հայտը և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջինիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

1.3 24.01.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ մերժել «Արատտա Ռիեյթի» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆինաֆի» ՍՊԸ-ին:

1.4 Հանձնաժողովը որոշեց «Ֆինաֆի» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մաս II (իրահանվող գնանշման հարցման հայտը պատրաստելու) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ «առաջինին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը»:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Ֆինաֆի» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:


2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-32/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «Ֆինալի» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման ղեկարարամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)



Հ. Մելիքյան

Գնահատող



Գ. Ուստյան

Գնահատող



Հ. Բաբաջանյան

Գնահատող



Ե. Վարդանյան

Գնումները համակարգող՝



Մ. Հոխեյան